

«ԳԻԼԳԱՄԵՇ» ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(Պրագա)

Գիլգամեշի դյուցազնավեպին մեծագույն մասը գտնված է Ասորեստանի թագավոր Աշշուրբանիպալի (668—626 մ.թ.ա.) մայրաքաղաքին՝ Նինվեի արքունի դիվանատան հարուստ բեկոագրական հավաքածուին մեջ, ասկե մոտավորապես 50 տարի առաջ։ Ուրուկի քաջարի և իմաստուն արքային՝ Գիլգամեշի բախտախնդրական կյանքին և քաջագործության նվիրված այս կարևոր էպոսը գրված է սումերական ծագում ունեցող սեպագրով պնակիտներու վրա, ակկադերենով, որ սեմական ցեղախմբին պատկանող բարելոնացիներու և ասորեստանցիներու գործածական լեզուն էր։ Վերոհիշյալ երկու ազգերը, որոնք թեև ցեղային և լեզվական ունեցել էին կապ չունին Միջագետքի սումերացիներուն հետ, բայց և այնպես ժառանգած են անոնց բարձր մշակույթին և քաղաքակրթության հետ նաև անոնց բարգավաճ երկիրը՝ Սումերաստանը։

Սումերական այս դյուցազներգությունը, որ աշխարհիս ամենահնագույն դեղարվեստական գրականության գոհարն է, նախ՝ XX դարուն և հետո Բաբելոնական խելացի արքային՝ իսամուրաբիի իշխանության ժամանակ (XVIII դար մ.թ.ա.) ակկադերենի վերածված է և բաժանված տասներկու գրվածքներու։ Ասորեստանի և Փոքր Ասիո զանազան կողմերը գեո երկար ժամանակ պահած է ան իր այժմեականությունը, ինչպես կվկայեն VI դարուն (մ.թ.ա.) անկե ընդօրինակված երկու ֆրագմենտներ, որոնք հայտնաբերված են հնագիտական պեղումներու ընթացքին Վարկայի ավերակներուն մեջ, հոն՝ ուր կգտնվեր երբեմն դյուցազնական Գիլգամեշի պարսպապատ Ուրուկը, Աստվածաշնչի Երեխը։

Խառնուշայի, Երբեմնի լայնատարած հեթական հզոր կայսրության մայրաքաղաքին, ներկա Բողազքյուի ավերակներուն տակ թաղված արքայական դիվանին մեջ, գերմառացի արևելաբան և հնախույզ Հ. Վինկլերի և Օ. Պոլսշտայնի կողմե գտնված են «Գիլգամեշ» գյուցազնավեպն մեծ և փոքր բեկորներ, որոնք խմբագրված են հեթերենով և խուրերենով, որով մինչև այսօր այս գյուցազնագիրքը ծանոթ է չորս հնագույն լեզուներով՝ սումերերեն, ակկադերեն, հեթերեն և խուրերեն։ Շատ հավանական է, որ այս կարևոր գյուցազնավեպը կարգ մը ուրիշ փոքրասիական լեզուներու ալ (խատտերենի, պալայերենի, խայերենի¹, լուվերենի կամ արծավերենի) վերածված ըլլա, բայց

¹ Խայերենը կամ խայերենը խայաշա (խայաներու երկիրը, Խայաստան) բնակող խայա կոչված անդամիկ ժողովրդին լեզուն է, որ, ըստ իս, մեր նախնյաց՝ խայացիներու խոսած լեզուն է՝ հայերենը, որուն ենթախոս փոքրասիական ծագում ունի լեզուներն են։ Մարտիրոսյան, Հայերենի հարաբերությունը հեթերենի հետ, «Հանդես ամսօրյա», 1924, թիվ 9 10, էջ 413, 1926, թ. 7—8, էջ 369)։

ցարդ բեկոր մը իսկ գտնված չէ այս վերջին լեզուներով: Գիլգամեշի, Էնգի-դուի և դինական խումբաբայի զրույցները, սիրված ու տարածված ըլլալով հնագույն Մերձարեւելքի այլացեղ ու այլալեզու ժողովուրդներու մէջ, բերանացի ավանդությամբ գարեբով պահւած մնացին՝ սերունդէ-սերունդ, ցեղէ-ցեղ և երկրէ-երկիր անցնելով: Հետեւաբար երբեք վարմանալի չէ, որ «Գիլգամեշ» դյուցազնավեպին գլխավոր հերոսներուն՝ խումբաբայի և քաջ Էնգիդուի անունները խուբարով, խուպապով, Հեռնիտյու, Հեռնաու: (Հեռնդու) ձևերով մինչև այսօր պահւած են արեւմտահայերու մօտ: Այս մասին տե՛ս «Պատմութիւն Անթեպի Հայոց» գավառական բառարանը, ուր առաջ բերված են վերոհիշյալ անունները:

«Գիլգամեշ» դյուցազնավեպին նյութը հավանաբար առնված է վաղեմի Ժամանակներէ մնացած փոքրասիական ժողովրդական հերոսապատումներէ և զրույցներէ: Սումերացի հանճարեղ բանաստեղծը, որուն անունը տակաւին մեղի անհայտ կմնա, հավաքած ու զրի առած է զանոնք մեծ վարպետությամբ, տալով անոնց կշռույթ և երաժշտականություն, բայց ոչ հանդ: Ինչպէս կերևի, այս դյուցազնավեպը ժամոտակին երգելով կկարդացվեր և կսմ ուղղակի կերպեր գուսաններու՝ կողմէ: Գիլգամեշի, Էնգիդուի և ահեղ խումբաբայի զրույցները ու առասպելները սումերացիներու երկրեն՝ Միջագետքեն մօտք դործած են գեպի Բաբելոն, Ասորեստան, Հեթաստան, Խուրրիներու երկիրը, Իսրայել, Հայաստան (խայաշա), Արաբիա, Հնդկաստան, Հունաստան, Իտալիա և ուրիշ երկրներ, ուր անոնք զանազան ձևերով յուրացված և ազգայնացված են:

Այս դյուցազներգությունը գրված է նախապէս սումերերէնով, որ իր բառամբերքով ու քերականական կազմով ոչ հնդեվրոպական, ոչ ուրալ-ալթայան և ոչ ալ սեմական լեզվախմբին կպատկանի: Սումերացիներուն լեզվով խմբագրված կտորներէն մինչև այժմ հինգ-վեց պնակիտ գտնված են Դիլիպատի, Կիշ-Խուրսագկալամայի և Նիպպուրի մէջ: Այս պնակիտներուն շնորհիւ կարելի եղավ «Գիլգամեշ» դյուցազնավեպին տասներկուերորդ գրվագը մասամբ մը լրացնել: Ուրեմն այս դյուցազնական բանաստեղծության բուն հեղինակները Միջագետքի ամենահին կուլտուրան ստեղծող հնարամիտ և հանճարեղ սումերացիք եղած են: Զէ՛ որ կուլտուրի Գիլգամեշը անոնց ազգային հերոսն էր — միաժամանակ մարմնացումը՝ սումերական ազգային առաքնութեանց, գիտութեանց և բոլոր արվեստներու:

Գիլգամեշ կպատկաներ ուրուկյան առաջին հարստութեան, որուն հիմնադիրը արև-աստուծո որդին՝ Մեսկինզաշերն էր: Անոր հաջորդներն էին իր տոհմին պատկանող Էնմեկարը, Լուղալբանդան, Գիլգամեշը (Կուլտրի նախկին քրմապետը, որ 126 տարի իշխած է), Ուր-Նունդալը (Գիլգամեշի որդին, որ 30 տարի իշխած է), Ուտուկալաման (Ուր-Նունդալի որդին, որ միայն 15 տարի իշխած է): Միեւնույն տոհմն սերող իշխաններու այս հաջորդութեանը, ըստ Բ. Հրոզնիի, 2310 տարի տեւած է²:

Գերմանացի ներհուն ասորաբան և արեւելագետ Պետր Ենսըն, որ իր «Հիթիտեր ունդ Արմենիեռ» («Հեթացիք և հայերը») կոչված ժրպշան գործին մէջ Փոքր Ասիո զանազան կողմերը հայտնաբերված մեհենադրոշմները գրաբար

¹ Հայ. գուսան բառն ալ արդեն փոքրասիական հին լեզուներէ մնացած է մեր լեզվին մէջ և կնշանակէ «վարձկան երգիչ» հեթերէնի մէջ: Հեթական ձեւն է՝ կուսան կամ գուսան (տե՛ս Ն. Մարտիրոսյան, Altarmenische Volkesüberlieferungen über Tork, Archiv Orientalni, t. II, 1930, էջ 193):

² B. Hrozný, Nejslarsi dejiny Predni Asie. Indie a Kreta, էջ 60:

հին հայերենով մեկնել ուզեց, հեթանոս հայերու նախնիքը հայտարարեց և պատկերազրույթյանց չեզոք հայերենի նախամայրը հռչակեց, կգրե. «Գիլգամեշի դյուցազններգությունը իրականին մեջ կրոնադիրք մըն է, նոր արեւաստուծո մը ավետարանը, ապրողներու համար ալ խորհրդադիրք մը, հայտնություն մը: Բաբելոնացիներու համար ալ եղած է այն, ինչ որ է Աստվածաշունչը մեզ համար»:

Երբայեցիք «Գիլգամեշ» դյուցազնավեպեն լազմաթիվ նյութեր, օրինակի համար՝ Սումերաստանի մեջ Ժամանակին տեղի ունեցած ջրհեղեղի և Ուտնապիշտիմի՝ բաբելոնացիներու նոյ Նահապետին պատմությունը յուրացնելով, իրենց Հին կտակարանին կամ Ս. Գիրքին միջոցով փոխանցած են նաև քրիստոնեությունը ընդունող բոլոր ազգերուն: Սուրբ Գիրք կամ Աստվածաշունչը ըսվածը, սակայն, երբայեցիներու առասպելական պատմությունն է, որ կսկսի մեր թվականեն մոտավորապես տասը դար առաջ:

Համեմատական ուսումնասիրությամբ ննսրն կրցավ փաստացի կերպով ասպացուցանել, որ Հոմերոսի դյուցազնական վիպերգությունները՝ «Իլիականը» և «Ոդիսականը» Գիլգամեշի դյուցազններգության հետ սերտ առնչություն և ներքին ազգակցություն ալ ունին, հանգամանք մը, որով երևան ելավ, որ հոնիացի Հոմերոսն ալ իր վերոհիշյալ էպոսներուն նյութը և կերպարները երրորդ հազարամյակեն մնացած փոքրասիական ժողովրդական ավանդություններն և կամ ուղղակի «Գիլգամեշ» դյուցազնավեպեն առած է, հերոսներուն տալով հունական անուններ և իր բանաստեղծության նոր տարազ:

Ուրեմն VIII կամ VII դարում մ. թ. ա., Հոմերոսին ծանոթ էին Փոքր Ասիոյ զիլգամեշյան զրույցները՝ պահված զրավոր կամ բերանացի ավանդությամբ:

Փոքր Ասիոյ հնագույն ազգերն ալ, երբ «Գիլգամեշ» դյուցազնավեպը կամ անոր մաս կազմող լեզենդներեն մին կամ մյուսը թարգմանած, կամ անոր հետևողությամբ նոր դյուցազններգություններ ստեղծեր են, հաճախ փոխած են հերոսներուն անունները. «Գիլգամեշ» եղած է «Գիշ» կամ «Գիշգիմաշ», հայերու մոտ հավանաբար՝ «Տոբ», սումերացիներուն «Խուվավան» եղած է «Խումբարա», «Խումպապա», հայերուն մոտ՝ «Խուպապուկ», «Խրնիմին» եղած է «Իշխարա» կամ «Իշտար», որուն հետ կապ ունի մեր Աստղիկ անունը. «Էնկիարուրուն» եղած է «Էնկի», «Էնկիդու» կամ «Էնգիդու», հայոց մոտ «Հեռնիպու», «Հեռնոյու», «Ուրշանաբին» եղած է «Սուրսունաբու» և այլն: Միջավայրը ու ժամանակն ալ անշուշտ իրենց դերը կատարած են այս փոփոխությանց կամ աղավաղմանց մեջ:

Մեր անմահ պատմահոր՝ Սովսես Խորենացիի կողմն հինգերորդ դարուն զրի առնված և կորուստն փրկված Տորքի երկու զրույցները, որոնց կորիզն անկասկած անհիշատակ ժամանակներն մնացած է, հավանաբար Գիլգամեշի դյուցազնավեպին հետ սերտ առնչություն ունեցող փշրանքներ են, որոնք բերել ըրերան ավանդվելով պահված են Հայաստանի մեջ մինչև Խորենացիի օրերը¹:

Նաև Ղազարոս Աղայանի հավաքած և «Տորք Անգեղ» խորագրով հրատարակած երկը՝ կազմված է Տորքին վերագրված հինգ ժողովրդական զրույցներե,

¹ Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, ր. 8, էջ 173 – 175 (Վենետիկյան տպագրութիւն): Աշխարհարար ան'ս Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսութեան, էջ 42:

² Տե՛ս «Հայ դրոշներ», հ. 1, Թիֆլիս, 1914:

որոնցմե երկուքը նման են *Խորենացիի* մաս ճիշատակված տորքյան առասպելներուն և մյուս երեքն ալ պահված են անգիր ավանդությամբ: Այս ժողովրդական առասպելները և զրույցները մոտեն կամ հեռուն կապ ունին «Գիլգամեշ» դյուցազնավեպին հետ, որ նմանապես կրադկանա հնավանդ փոքրասիական հերոսապատումներն: «Գիլգամեշ» դյուցազներգության 12-րդ զրվագին մեջ կպատմվի, թե ինչպես քաջարի Գիլգամեշ հաստատուն ծառը արմատով մեկտեղ հանած և ուսը առնելով գյուղաքաղաք բերած է, վարմանք պատճառելով բնակիչներուն: Վերև հիշված հայ ժողովրդական ավանդության համաձայն, միևնույն բանը ըրած է Անգեղի՝ զմահահայաց Տորքը՝ հայկական, կամ ավելի ճիշտը՝ հնագույն Փոքր Ասիո ժողովրդական առասպելներու հերոսը, իր գերմարդկային ուժը հասարակության ցույց տալու համար²:

Սեր աննման քերթողահայրը, նկարագրելով Տորքի պատկառելի կերպարանքն ու գերմարդկային ուժը, կպատմե, որ ան Սագճիկեն (Ռոստոմեն) և Հերակլեսեն շատ ավելի ուժով եղած է: *Խորենացիի* պատմածին համաձայն, Տորք բլուրի մը շափ խոշոր քարեր թշնամի նավերուն վրա նետելով, կընկղմեր զանոնք և այդպիսով կիրկեր ժողովուրդը շարագործներու ու ծովահեններու դաժան արարքներն: Շատ ավելի հետաքրքրական և մշակույթային պատմության համար հույժ կարևոր է, սակայն, *Խորենացիի* «Հայոց Պատմության» այն հատվածը, որ ան մեզի հավասարմորեն կպատմե ժողովուրդեն լսածը, թե ինչպես Տորքը խոշոր քարերը ճեղքելով, զանոնք սալերու և կամ քարե տախտակներու կվերածեր ու անոնց վրա արծիվի և ուրիշ կենդանիներու և առարկաներու պատկերները կփորագրեր: Որքան ատեն որ հեթանոսներուն վերադրված փոքրասիական պատկերագրերը մեզի անծանոթ էին և տակավին չէին ուսումնասիրված, չէինք կրնար ըմբռնել, թե ինչ ըսել կուզե *Խորենացին*: Այսօր այլևս բոլորովին պարզ է, որ «Պատմություն Հայոց»-ի մեջ եղած ակնարկությունը՝ կենդանիներու և առարկաներու պատկերներե բաղկացած փոքրասիական մեհենադրոշմներու մասին է, որոնք գործածված են սեպագրի կողքին Փոքր Ասիո մեջ շատ մը հին ավերու կողմն երկրորդ և առաջին հազարամյակներու ընթացքին մեր թվականներն առաջ:

Սումերացի հագներգուն (rhapsode, epiker) կներկայացնե մեզի միայն իր հերոսներուն՝ Գիլգամեշի և Էնգիլգուի ֆիզիկական ուժը, շարքաշույթունը ու մարտնչումները: Մինչդեռ *Խորենացիի* Անգեղ Տան Տորքը միևնույն ատեն քարե տախտակ շինելու և անոր վրա մեհենադրոշմներ փորագրելու նուրբ արվեստին հմուտ դպիր մըն է՝ մարմնացումը քաջարի, տոկուն և մշակույթի սիրահար խաչական ցեղին, որ, ըստ Շուպպիլուիլիումի և Մուրշիլի տարեգրությանց,

¹ *Խորենացին* Անգեղ (Անգղ) տեղանունը «տղեղ» իմաստով ըմբռնած է: Անգեղ հայաճարար Անգղ (—Ինգալ—ավա) տեղանունին սեռական հոլովն է հին հայերենի մեջ:

² *Խորենացիի* Տորքը հնագույն Մերձարևելքի մեջ տալոված դյուցազն մըն է, որուն անունը հաճախ հիշատակված է հեթանոսական և հեթանոսականացած հայերի, Տարիու ձևերով, որ հեթ. տարի—հարենավ իսլամականին և հեթ. տարիու իլիշ «կարող», «հերոսական» «հեղափոխական» և տարիու իսլամական «կարողություն», «հերոսություն», «բաշխություն» բառերուն հետ կապ ունի: Իսկ Անգեղ (Անգղ) փոքրասիական աշխարհագրական անուն մըն է, որ Իշուվայի (Ծոփք) մեջ գտնվող հեթ. Ինգալավա տեղանունին կհամապատասխանե: Այս մասին տե՛ս ուսումնասիրությունս «Altarmenische Überlieferungen über Toirk», Archiv Orientalni, t. II, 1930, Պրագա, և «Հայ տեղանուններու շուրջ»: «Կյանք և դիր» տարեգիրք, 1948, էջ 119:

հիմնած է ասկե 3500 տարի առաջ խայաշա¹ կոչված առաջին պետությունը, որ քանիցս հեթական հզոր կայսրության դեմ պատերազմի ելլելով, հաղթանակներ ալ տարած է:

Կողմնակի պետք է հոս նշել, որ նաև «Սասունցի Դավիթ» դյուցազներգության և «Գիլգամեշ» էպոսին միջև շատ մը նմանություններ կան. այսինքն, «Սասունցի Դավիթն» ալ Գիլգամեշի դյուցազնավեպին ազդեցությունը կրած է, բայց այս մասին ուրիշ առթիվ:

Գիլգամեշի էպոսը, որ դիցաբանական բնույթ ունի, կպատմե մեզի կիսաստվածային խրոխտ դյուցազնի մը մասին, որ տիտանի մը պես կծառանա հին աստվածներու դեմ: Փոխանակ հպատակելու, կմերժե Իշտար դիցուհիի սիրո առաջարկը: Դեռ ավելին, առաջին մարդն է, որ կփորձե կորզել կյանքի և մահվան, աստվածային զրախտի և դժոխքի դադարներից, մտնելով լուսո, արդարության և ճշմարտության տեր, արեաստված Շամաշի ծառայության մեջ:

Նվ թեպետ Գիլգամեշը անսահման դժվարությանց և վտանգներու դեմ հաղթականորեն պայքարեցավ, թեպետ ինքն ալ երկու երրորդով աստված և մեկ երրորդով մարդ էր, բայց և այնպես չկրցավ ձեռք բերել հավերժական կյանքը և անմահությունը, որուն այնքան կցանկար, ու վերջապես ինքն ալ՝ պարսպապատ Ուրուկի հզոր արքան, ստիպվեցավ համակերպել մահկանացուներու ճակատագրին:

Ահա Գիլգամեշի դյուցազներգության հակիրճ բովանդակությունը (ըստ Պ. Ենսընի մեկնության):

«Հյուսիսային Բաբելաստանի ամենահին քաղաքներն մեկը՝ Ուրուկ, կրճնշվի Գիլգամեշ արքային կողմեն, որ մայրաքաղաքին պատնեշները շինել կուտա իր հպատակներուն:

Աստվածներու հրամանին անսալով, Արուրու դիցուհին հողեն վայրի կերպարանքով ուժեղ հսկա մը կստեղծե էնգիդու անունով, որուն ոչ միայն գլուխը, այլ ամբողջ մարմինը մազով ծածկված է: Էնգիդու, որ քաղաքի մարդոց թշնամի և դաշտավայրերու մեջ ապրող անասուններու պաշտպանը կնկատվի, միշտ անոնց հետ լեռները կարածի ու կթափառի:

Որսորդ մը, որուն որսին էնգիդու միշտ արգելք կըլլա, Ուրուկի Իշտարի տաճարեն գեղեցիկ քրմուհի մը առնելով, տափաստանները կերթա և ջուրի թով կսպասե: Երբ էնգիդու վիթերուն հետ ջուր խմելու կուգա, կնշմարե մեզկ ու գրգռիչ ցնծուհին, որ իր տեսքովն ու դեղով ծաղիկի մը պես կհրապուրե զայն և իրեն քով կտանի:

¹ Կուր Ուրու Պայա-շա «Երկիրն, քաղաքն Պայաշա» տեղանունը հիշատակված է հեթական սեպագրությունց մեջ և անունն էր այն լեռնաշխարհին, որ կգտնվեր Պոպանի (Տերոմիս) և Անձիտի շրջանները: Պայաշա երկրանունը կազմված է Պայա կոչված դիցանունեն(?) և վերաբերում ցույց տվող հեթական «շա» մասնիկին, որ կցված է նաև գուտ հեթական տեղանուններու, օրինակ՝ խալտի կամ խալտու աշխարհադրական անունին միանալով եղած է Պատուշա, որ հեթական մայրաքաղաքին և երկրին փառապան զանունն է: Ուրեմն հեթական հետադաս—շա մասնիկով կազմված Պայա-շա անունը կնշանակե Պայաի երկիրը կամ Պայաստան (Հայաստան): Երբ հեթական «շա» անունը անջատելու ըլլանք, կունենանք մեր երկրի, մեր ազգի և լեզվի, նախնական խայա կամ հայո անունը, որ հույն պատմիչներու կողմեն չօլ կամ չօլ ձևերով տառադարձված է Մարում մ. թ. ա.:

Դեռատի քրմուհին վեց օր և յոթը դիշեր գինարուք սարքելե հետո, կհամոզե և Ուրուկ կտանի լեռներու հսկան՝ էնգիդուն: Գիլգամեշի ոստանը Ուրուկիերոյ ցնծութեան մեջ է, էնգիդուի գալուստը կտոնեն: Իշտար դիցուհին ննջարանին գուռը կբացվի և Գիլգամեշ կուղե ներս մտնել, թերևս Աստղիկի հետ ամուսնանալու համար, բայց նորեկ էնգիդուն արգելք կըլլա: Ասոր վրայ երկու հսկաները կգոտեմարտին և Գիլգամեշ կհաղթվի, ինչպես ան մարաշնշումեն օր մը առաջ երազը տեսած էր: Ուժի այս փորձը կատարվելե հետո, երկու հերոսները՝ Գիլգամեշ և էնգիդու սերտ բարեկամություն կհաստատեն ու կորոշեն էլամի և Լիրանանի լեռները, մայրիի անտառներուն մեջ ապրող ճիվաղը՝ Խոմբարան սպանել, Երկար ատեն փնտրելե հետո վերջապես կգտնեն ու կսպանեն:

Վավաշուտ Իշտար դիցուհին սիրո առաջարկ կընեն երկիրը սարսափազդու Խոմբարայի և չար դեերու տանջանքեն փրկող քաջ Գիլգամեշի, որ արհամարհանքով կմերժե անոր առաջարկը, քաջաբար հիշեցնելով Իշտարի նախկին վեց սիրականները, որոնք վերջեն դժբախտության մատնված են: Իշտար զայն բանալով, իր հորը՝ Անուի կդիմե ու կզանգատի խորխտ Գիլգամեշեն, պահանջելով, որ դիցահայրը երկնային վայրի ցույ մը ստեղծե ու երկիր դրկե, որպեսզի Գիլգամեշի դեմ ելլե: Երկնագիրը Անու թեև նախապես կհակառակի Իշտարի այս պահանջին, որովհետև ցույի մը երևումը աշխարհիս վրա յոթը տարի սովի պատճառ կընա ըլլալ, բայց և այնպես վիթխարի ցույ մը ստեղծելով, դուստրին՝ Իշտարի կհանձնե, որպեսզի Գիլգամեշը սպաննե: Գիլգամեշ և իր սրտակից բարեկամը էնգիդու այս երկնային ցույն ալ երկար մարտնչումեն մը հետո կսպանեն: Այս առթիվ Ուրուկի մեջ ուրախության տոն մը տեղի կունենա:

Էնգիդուն դիշերը գեշ երազ մը կտեսնեն աստվածներու խորհրդակցության մասին, որուն ընթացքին էնլիլ, աստվածներուն ամենամեծը, արևաստված Շամաշի կհայտնեն, որ էնգիդուն պետք է մեռնի: Ասոր վրա էնգիդուն իսկապես կմեռնի, անհուն թախիժ ու վիշտ պատճառելով իր սիրելի ընկերոջ՝ Գիլգամեշին:

Գիլգամեշ իր հավատարիմ և անկեղծ բարեկամին մահեն հետո կսկսի խորհել կյանքի և մահվան հարցի մասին: Խոռվված՝ մահվան երկյուղեն, կդիմե նախահոր՝ Ուտնապիշտիմի, Բաբելաստանի ջրհեղեղի հերոսին, որպեսզի անորմե կյանքի և մահվան գաղտնիքը իմանա: Գիլգամեշ անապատային և լեռնային ճամփաներե անցնելով կհասնի Մասու լեռը, որուն ստորոտը երկու ասեղ կարիճ-մարդու կհանդիպի, որոնք սորի մը մեջ կբնակին և լեռան մոտքին վրա կհսկեն: Քսանչորս ժամվան դժվարին ճամփորդութենե և խաղախափումներե ետք, վերջապես կանցնի Մասու լեռան խորուղիեն ու կհասնի մեհենական անտառ մը, որուն չքնաղագեղ ծառերուն ճյուղերեն կախված են գուլնգդույն ազնիվ քարեր:

Հոն, կապելային մեջ՝ կնշմարե մատուակ Սիդուրին, որ աստվածներուն անմահական ըմպելիք կբաշխե: Սիդուրին զայն Ուտնապիշտիմի նախկին նավորդ Ուրշանաբիին կորկե, որ այնքան ալ հեռու չէ: Ուրշանաբիի հրահանգին համաձայն, Գիլգամեշ 60 կանգուննոց 120 ձաղկ կբերե նավավարին և հետո անոր հետ միասին ծովը ճեղքելով Ուտնապիշտիմի քով կերթան: Նախապես առանց արգելքի իրենց ճամփան կշարունակեն, բայց հետո «մահվան ջուրերուն» մեջ ճամփորդելը վտանգավոր կդառնա: Անհամար դժվարու-

թյուններն հետո, Գիլգամեշ վերջապես Ուտնապիշտիմի քով կհասնի, կենաց և մահու մասին տեղեկություն քաղելու համար: Ուտնապիշտիմի՝ րաբելունացիներու Նոյ Նահապետին տված տեղեկությունները կյանքի և մահվան մասին միտնաբերական չեն: Բոլոր մարդիկ պետք է մեռնին, նաև Գիլգամեշ: Գիլգամեշի հարցումին վրա, թե ինքը՝ Ուտնապիշտիմը ինչպես հավիտենական կյանքի արժանացած է, այս վերջինը կպատմե իրեն ջրհեղեղի պատմությունը և կըսե, որ ինքը և իր կինը ջրհեղեղը վերապրելն հետո, աստվածացած են և աստվածներու բնակավայրը՝ երանելիներու կղզին փոխադրված:

Ուտնապիշտիմ և իր կինը ցավելով իրենց դարմիկին հողեկան վիճակին վրա կուզեն կերպով մը օգտակար ըլլալ իրեն: Խորհուրդ կուտան, որ Գիլգամեշ 6 ցերեկ և 7 գիշեր արթուն մնա կյանքը դռնելու համար, բայց հանկարծ անոր քունը կտանի: Ուտնապիշտիմի րարի կինը խորհրդանշական յոթը հոց կեփե և Գիլգամեշի բարձին տակը կզնե, որպեսզի ղեկըր քունը չխանգարեն:

Ուտնապիշտիմ խորհուրդ կուտա Գիլգամեշին նորեն երկիր վերադառնալ ու կարեկցելով, կըսե անոր «կենաց ծառին»՝ կիշկաճուխի բուսած տեղը: Հրաշագործ բույս մը, որուն պտուղը ուտողը հավիտենապես երիտասարդ կմնա և նույնիսկ, երբ ծերը ուտե այդ կենարար կիշկանու (հայ. կասկեճի) կոշված բույսին պտուղը, կերիտասարդանա:

Գիլգամեշ իր նպատակին կհասնի. կենարար բույսը կգտնե եփրատի եզերքը և պտուղը կուտե միշտ երիտասարդ և անմահ ըլլալու համար: Բայց, ավագ, վերադարձին, երբ Գիլգամեշ յճակի մը մեջ լողանք կրնե, օձը, մարդուս հին թշնամին, այդ հրաշագործ տոճկը կհափշտակե ու Գիլգամեշի անմահության վսեմ երազը կցնդի: Ահա, այդ է պատճառը, որ օձը տարին անդամ մը շապկը փոխելով կերիտասարդանա:

Դյուցազններգության գլխավոր հերոս Գիլգամեշ իր «հավերժական կյանքի» մեջ հուսախաբ ըլլալով կփափաղի տեսնել իր հանգուցյալ րարեկամը՝ էնդիղուն: Երկար պաղատանքներէ հետո, մարդասեր էան կհրամայե մահվան աստված Ներկալին, հոգին տակեն վեր բերել էնդիղուի ուրվականը, որպեսզի Գիլգամեշ ուղղակի իր սիրելի րարեկամին բերնէն իմանա մեռելներու վիճակը անդիի աշխարհին մեջ: Գիլգամեշ կիմանա, բայց հուսախաբ կըլլա:



Ավելորդ չեմ համարեր հոս փոքրիկ ծանոթություն մը տալ «Գիլգամեշ» դյուցազններգության նախերգանքի մասին, որուն բնագիր պնակիտը դժբախտաբար դեռ կպակսի: Մինչև այսօր Փոքր Ասիո զանազան կողմերը հալտնարելով և Գիլգամեշի դյուցազնավեպին պատկանող սոմերական, ակկադյան, հեթական և խուրրիական բեռագիր հիշատակություններուն մեջ տակտվին գտնված չէ հոս առաջ բերված «Նախերգանքը»: Դոկտ. Ալբերտ Շոտտը¹ այս «Նախերգանքը» քաղվածաբար առած ու թարգմանած է Կլավգիրոս Անիանոսի կողմէ հունարեն դրված «Պատմություններ անասուններու մասին» գրքին²:

¹ Dr. Albert Schott, Das Gilgamesh = Epos (Reclams Universal Bibliothek, թիվ 7233), էջ 14:

² Claudius Aelianus (Κλαύδιος Αἰλιανός, Περὶ Ζῴων ἰδιότητος = Կլաուդիոս Աիլիանոս, Պերի զոոն իդիոտետոս):

Հռոմեական այս գրողը, որ մ.թ. II դարում ապրած է, դրի առած և իր գրքին կցած է Գիլգամեշի ծնունդին և մանկության վերաբերող ժողովրդական այս գողարիկ զրույցը, որ ավանդությամբ պահպանված ու հազարամյակներու ընթացքին տարածված է ոչ միայն արևելյան երկիրներու, այլ նաև Եվրոպայի և Աֆրիկեի մեջ գաղթողներու միջոցով: Մինչև այսօր ալ Մերձարևելքի մեջ զանազան ձևերով ու լեզուներով (հայերեն, թուրքերեն, հունարեն և այլն) կատարմին այսպիսի կամ ասոր նման ժողովրդական առասպելներ, որոնք մոտեն կամ հեռուն կապ ունեն «Գիլգամեշ» դյուցազնավեպին մաս կազմող զրույցներուն հետ: Աեւիանոսի կողմէ հավաքված ու կորուստե փրկված այս գեղեցիկ ավանդություններն մինչ, որ Ալ. Շոտտը թարգմանաբար առաջ բերած է «Գիլգամեշ» էպոսի սկզբում իրրե «Նախերգանք» և ես ալ զայն առ ի չգոյհ հայացուցած եմ, անկասկած Գիլգամեշի դյուցազնեցողության փշրանքներն մինչ է, որովհետեւ ըլլա նյութը, ըլլա սումերական դաս նախատիպարը, հակառակ աղավաղումներու, անոր մեջ գեռ աղոտ կերպով ի հայտ կու գան: Օր մըն ալ անշուշտ այս նախերգանքը պարունակող կամ անոր համապատասխանող սեպագիր պնակիտը պեղումներու ընթացքին, կամ պատահմամբ, երևան պիտի գա, դյուցազնավեպին մաս կազմող ուրիշ բեկորներու նման:

Հետաքրքրության համար կարժե հոս նշել, որ համաշխարհային համբավ վայելող շեխ երգահաններն մինչ Բոհուսլավ Մարտինու, որ ներկայիս Զվիցերիա կապրի, «Գիլգամեշ — էպոս» անունը կրող երաժշտություն մը հորինած է, որ այս տարի (1958) Պրագայի երաժշտական փառատոնին Չեխոսլովակիո մեջ առաջին անգամ ըլլալով պիտի նվագվի: Պրագայի պետական երաժշտանոցի տնօրեն՝ դոկտ. Հոլցկնեխտի (Holzknecht) տված տեղեկության համաձայն, Բոհուսլավ Մարտինուն (Bohuslav Martinu) հարգարած է երեք մասերէ բաղկացող իր նվագը՝ հագներգական ոճով: Մարտինուն գրած է իր այս զուգի գործոցը «Գիլգամեշ» հերոսավեպին անգլերեն թարգմանության հիման վրա³, Չեխ երգահարդարը դյուցազնեցողության տասներկու պնակիտներն ընտրած է միայն երեք դրվագ, որոնք անձամբ մշակելով բաժանած է երեք մասի՝ Գիլգամեշ, էնգիղուի մահը և ոգեկոչումը: Այս երեք դրվագները Պրագայի երաժշտական ֆեստիվալին ներկայացնելու համար անգլերենն շեխերենի թարգմանած է Ֆերդինանդ Պույմանը (Ferdinand Pujman):

Չեխ կոմպոզիտորին հորինած «Գիլգամեշ — էպոս» կոչված երաժշտական գործը թեւ շատ հրապուրիչ է, բայց հույս չունիմ, որ եվրոպացի հեղինակ մը կրնա հին Արևելքի խորհրդավոր մտայնության դյուրավ թափանցել:

Վստահ եմ, որ այս հնավանդ մշակույթային հիշատակարանը իր ինքնատիպությամբ և փիլիսոփայական բովանդակությամբ պիտի գրավեն նաև Սովետական Հայաստանի արվեստագետներուն ուշադրությունը և անոնք ալ պիտի փորձեն «Գիլգամեշ» հերոսավեպին պարունակած հարուստ նյութը աշխատասիրել և օգտագործել իրենց արվեստներուն մեջ:

³ R. Campbell Thompson, The Epic of Gilgamesh. Text, Translation and Notes, Oxford, 1930.

ГЕРОИЧЕСКИЙ ЭПОС «ГИЛЬГАМЕШ»

Н. МАРТИРОСЯН (Прага)

(Р е з ю м е)

Данная статья является предисловием к представленному автором в Издательство Академии наук Армянской ССР армянскому переводу древнейшего памятника мировой литературы — героического эпоса древнего Востока о подвигах полубогочеловека правителя шумерского города Урука (Южная Месопотамия) Гильгамеша (начало 3-го тысячелетия до н. э.). В одном из древнейших шумерских текстов Гильгамеш изображен вождем племени. Возникший позднее цикл мифов изображает его героем-полубогом. В них с большой художественной силой и философской глубиной отражены вопросы жизни и смерти, мысли о бренности бытия и борьбе за счастье.

Поэма о Гильгамеше еще в древности была переведена на хеттский и аккадский языки. Копия вавилонской поэмы о Гильгамеше была обнаружена примерно 50 лет тому назад при раскопках Ниневии в библиотеке ассирийского царя Ашшурбанипала (668—626 гг. до н. э.).